ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19. 12.2017թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 92 -ը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ - ձեռնարկությունների ղեկավարներ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մարզի համայնքների 2017թ. 11 ամիսների բյուջեների կատարման մասին:

/ Ձեկ. ֆին. և սոցիալ-տնտեսական զարգ. վ/պ Գ. Եղիազարյան/

2. ''Մաքուր Հայաստան'' ծրագրի շրջանակներում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մասով մարզում իրականացված և նախատեսվող աշխատանքների մասին:

/ Քաղաքաշինության վ/պ՝ Է. Ավետիսյան/

3. Այլ հարցեր:

1.Լսեցին՝

Մարզի համայնքների 2017թ. 11 ամիսների բյուջեների կատարման մասին աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Ա. Գրիգորյանը **:**

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- հետևողական լինել մինչև տարեվերջ ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու գործընթացում ,

- համայնքներում գույքահարկի մասով առկա խնդիրները համապատասխան մարմինների հետ վերացնելու նպատակով կազմել և մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն՝ համայնքի գույքահարկի բազայում հաշվառված, սակայն գոյություն չունեցող փոխադրամիջոցների վերաբերյալ :

2. Լսեցին

''Մաքուր Հայաստան'' ծրագրի շրջանակներում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մասով մարզում իրականացված և նախատեսվող աշխատանքների մասին աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Է. Ավետիսյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Ա. Գրիգորյանը **:**

Հանձնարարվեց

քաղաքաշինության վարչության պետ Է. Ավետիսյանին՝

- ցուցաբերել անհրաժեշտ հետևողականություն, մարզում հաշվառված իրավաբանական անձանց հետ աղբահեռացման պայմանագրերի կնքման գործընթացի իրականացման հարցում՝ հնարավորինս այն հասցնելով առավելագույնի;

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- 2018 թվականի համայնքների բյուջեները կազմելիս պարտադիր կերպով ընդգրկել աղբահանության գումարներ, հստակեցնելով բնակչության մեկ շնչի հաշվով վարձավճարի հարցը,
- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ համայնքների տարածքներում աղբահանության աշխատանքները ժամանակին և պատշաճ կազմակերպելու համար:

Նիստի վերջում մարզպետ Ա. Գրիգորյանն անդրադարձավ համայնքների էլեկտրոնային անձնագրերում զետեղված տվյալների թարմացման գործընթացին՝ **առաջարկելով համայնքների ղեկավարներին** համագործակցել մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանի և գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության հետ:

Միաժամանակ **համայնքների ղեկավարներին առաջարկվեց** նաև համայնքներում ամանորյա միջոցառումներ կազմակերպելիս համագործակցել կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ա. Գրիգորյանը՝ նիստի մասնակիցներին շնորհավորելով գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ